

տաւոր էին ծալապատիկ և անշարժ նստել ժամերով . պարտաւոր էինք երբեմն, ուսուցչի թոյլտուութեամբ, երգերով կարդալ դասները, կամ լոիկ միայն դասներիս տողերը համարել, աչքի տակից զիտելով ուսուցչի զըռութիւնը, կամ վերացեալ կերպով ապուշ ապուշ այս կամ այն առարկային մտիկ անել : Եյ՞ ինչ որ պահանջ է այժմ, այն ժամանակ յանցանք էր և չարութիւն : Եյժմ ուսումնարանը եթէ չունի ընդարձակ բակ աշակերտանիրի խաղալու համար, համարվումէ անյարմար շենք իւր նպատակին . այն ժամանակ մեր պարոն խալիֆայ ուսուցիչները իւրեանց խոնաւ, նեղու մուժ մառանն էլ շատ էին համարում մեղ համար . և որպէս զի մենք բնաւ ըրկարողանայինք շարժուել, մեր հանդերձի քղանցքի վերայ աւագ էին ածում ու կնքում, վայ այն անզգոյշ տղային, որի քը զանցքի վերայի կնիքը խախտուած կըլիներ : Մենք պարտաւորուած էինք ամենայն օր ծոմ գեալ զպրոց և մեր ուսուցիչները այդ պահանջումնին . նոքա մեր լեզուից գուշակումնին մեր զանցառութիւնը և խիստ պատժում . վերջապէս, էին զպրոցական կեանքը մեր մանուկների համար ընդհանրապէս . և Ելեքսանդրապօլցւոց համար մասնաւորապէս բոլորովին անհաւատալի կըթուեր իւր բոլոր զիապուածների մանրամասնութեամբ և ամենահետաքըքիր ու ծիծազաշրժ անելութներից (առակ) աւելի կը կարգացուեր, եթէ դորա խկական պատկերը մի քիչ բարեփոխուած ըլտեսնուեր գեռ զիւզական ծիսականներից շատերում և քաղաքի մասնաւոր մարզոց զպրոց ներում :

(Եաբունաչելի) :

Յ Վ . Ա .

ՍԿԶԲՈՒՆՔ ՅՈՒՍՈՒԲՆՈՒԹԵԱՆ .

(Ե-րեւակ . Ա-ր-բար . (882 թ . Ա .)

ՅՈՅՈՒ ՆԵՐՔԵՐ ԿՈՇՈՒԹԵՒՆԵԱՆ :

Յոյսի կեսնքը հասկանալու համար, հարկաւոր է ծանօթանալ նորա ներքին կազմութեան շետ :

Թէ ծաղկաբեր և թէ անծաղիկ բայերի բոլոր նիւթը կազմուած է ամենամարդ պարկերից կամ փամիս շոփներից, որոց իւսր շեր (կլետօնի) են անուանում :

Քոլոր խորշերը միևնոյն կազմութիւնն ունին, դոբա հաստրակ ոչօք անտեսանելի փոքրիկ պարկեր են, պինդ առաձգական մեծաւ մասամբ բարակ և թափանցիկ փառով, և որոց մեջ գտնուում է լորձիւնոտ հատիկաւոր կիսաշեղուկ նիւթ, Խորշի արտաքին փառին թաղանթ (օբոլոտա) են անուանում խոկ լորձիւնոտ հեղանիթին պրօտօլոսմայ (պրոուզամ) են առում։

Բոյսի որ մասից էլ որ վերցնենք միևնոյն է, արմատից ցողուից, աերեներից, ծաղկի մասերից, պինդ փայտից և թէ վերջապէս պտուղի հիւմալի մասից, բոյսին էլ մանրացուցի տակ խորշերից են բաղկացած երես։

Արեմն ամեն մի բոյս ամենամանը սունկից սկսուծ մինչ գորե որ կաղնին կազմուած է առանձին խորշերից, ինչպէս տունը շինուած է աղիսներից, կամ աւելի ես լաւ է ասել, ինչպէս խորիսինը շինուած է բջիջներից, միայն պյն զանազանութեամբ՝ որ բոյսը ինքն իրան է կազմուած և նիւթերին ինքն է ձև տալիս։

Քիմիական հետազոտութիւնները ցոյց են տուած, որ խորշի թաղանթը կողմուած է մի առանձին նիւթից, որին խորշանկուած (ելետչատկա) են անուանում, և որը բաղկացած է ածխածնից ջրածնից և թթուածնից։ Խոկ պրօտօպլասման բացի պյուր երեք տարրն ունի և բորակածի ինքն։

Գեռաշաս խորշը շատ փոքր է, տրամագիծը հասնումէ 1/10—1/100 դիմ, թաղանթը սասակի բարակ է և ներուը բոլորովին լցուած է պրօտօպլասմոյով և որի մէջ սովորաբար կարելի է նկատել կլոր, աւելի պինդ և մացեալ զանգուածից աւելի առանձնացած մի մաս որին գնդակ (յարո) են ասում։ Գնդակը գտանուումէ կամ խորշի մշտեղը, կամ նորա թաղանթի մօտ, բայց միշտ պրօտօպլանյի մէջ է լինում։

Քանի որ թաղանթը մեծանումէ, խորշի մէջ զատարկութիւններ (վակուոլի) են առաջնուում, որոց մէջ հաւաքւումէ զանազան նիւթերով լուծուած ջուր։ Այդ ջրահեղուկին ասումնն խորշային հիւթ (ելետոնայի սօնկութ)։

Պրօտօպլասմայի մէջ ցրուած մանր զատարկութիւնները հետզետէ խորշի մեծանալու ժամանակ, միանումեն. և մեծ զատարկութիւններ են առաջացնուում։ Եվ վերջոյ սովորաբար մի մեծ պահարան է կազմուում խորշային հիւթի համար և այդ պահարանի միջով երբեմն երբեմն ձգուում են պլասմատիկական թելեր. և եթէ այս վերջինները ես անհետանուած են, այդ ժամանակ պրօտօպլասման հաւաքւումէ թաղանթի ներսի մակերևոյթի վերոյի ծածկելով նորան շատ թէ քիչ բարակ շերտով։

Արեմն զարգացած և կետնքի համար ընդունակ խորշը բաղկացած է լինում. թաղանթից, պրօտօպլասմայից, գնդակից և խորշային հիւթից։ Քայի սոցանից խորշի մէջ գտնուում են և մի քանի ուրեշ նիւթեր, մասամբ պրօտօպլասմայի մէջ և մասամբ խորշային հիւթի մէջ թէ լուծուած և թէ պինդ դրսթեամբ։

Խորշի բոլոր մասերից ամենաէական մասը որ օտօպլասման է, կարծես թէ զա խորշի կենդանի մարմինն է, Պրօտօպլասմայի ներկայութեան հետ կապուած է վանդակի բոլոր զլիաւոր կենդանական երեջիները ուրեմն և բոլոր բոյսի կեանքը պրօտօպլասմայից կախումն ունի, որովհետեւ չենց պրօտօպլասմայի մէջ են կատարում այդ բոլոր քիմիական փոփոխութիւնները, որոնք անհրաժեշտ են բոյսի սնունդին մեծանալու և բազմանալու համար։ Պրօտօպլասմայից զրկուած խորշը, չէ կարող մեծանալ և բազմանալ և ուրեմն այդ տեսակ խորշին կենդանի անուանել կարէլի չէ։

Վիս կողմից, եթէ խորշի զնտակը կամ թաղանթը բացակայ է, Նորականքը չէ խանդարում։ Ըստ անդամ պատահումէ, որ զնդակը անհետանումէ, իսկ մի քանի տեսակ բոյսեր (միախարշաւոր անձազիկ բոյսեր) զնդակ բոլորովին չունին, Կմանապէս գտնուում են այն տեսակ խորշեր, որոնք շատ թէ քիչ ժամանակ տռանց թաղանթի են լինում։ Որը վերջիրում պրօտօպլասմայից է առաջանում։ Այդ տեսակ խորշերին մերկ (ուստի) են անուանում։ Իսկապէս ինչպէս մենք, յետոյ կտեսնենք, բոլոր բոյսերը իւրեանց կեանքը սկսում են այդ մերկ խորշի ձեռվ։

Ենքն ըստ ինքեան պրօտօպլասման անդպյն է, իսկ բոյսի կանաչ մասերում պրօտօպլասման առանձին փոփոխութեան է ենթարկուում։ Երբ բաժանում է զնդերի կամ հատիկների, որոնք պարունակուումն իւրեանց մէջ կանաչ գոյնով ներկուած հիթ, քլօրօֆիլ անուանում։ Քորա համար այդ զնդերին քլօրօֆիլի հատիկներ են անուանում։ Եթէ պրօտօպլասմայի վերայ ներդորձենք եթերով (էֆիր) կամ ալկօնուվ, քլօրօֆիլը անհետանումէ և հատիկների տեղ մնում են պրօտօպլասմային անդպյն զնդակներ։

Քլօրօֆիլի հատիկներն աւելի շատ են լինում բոյսի մակերեայիթի մասերի մէջ, և որովհետեւ քլօրօֆիլի հատիկների գոյնը երեսումէ խորշերի բարակ պատերի միջավ։ Այդ պատճառաւ այդ մասերը (առաւելապէս անեները) կանաչ գոյն են տալիս։

Բոյսի կեանքի համար քլօրօֆիլը շատ անհրաժեշտ է։ Արեգական լուսի ազդեցութեամբ քլօրօֆիլը բաժանումէ բոյսի մէջ մանալ ածխաթերթուածներ իւր տարրական մասերին այն է ածխածնի և թթուածնի, որոնցից թթուածնը ազատուելով արտաթուումէ բոյսից, իսկ ածխածնը միանալով խորշի մէջ զանուած ջրի տարրի հետ կազմումէ ուլայ՝ շաքար և այլն։

Քլօրօֆիլից զրկուած բոյսերը ածխաթերթուած բաժանելու ընթացունակութիւն չունին, առա ուրեմն կարող չեն իւրեանց անկառածներ (տկան) կազմելու համար ածխածնին հայթայիթել։ Նոքա (օրինակ սունկերը) հաց կառակների (նարազիտ) նման ամենահարկաւոր ածխաթերթուածին միութիւնները պիտի ծծեն, միւս քլօրօֆիլ ունեցող բոյսերից և կամ պիտի ընդունեն նեխ, ոչ զորհարանաւորական նիւ թերեւ

Քլորօֆիլի առաջանալը զանազան հանգամանքներից կախումն ունի, շատ քիչ բայսերինը մթնում է առաջնուում։ Ընդհանրապէս պիտի ասել, որ պրոտոոպլասմական համբկներին կանաչ գոյն տալու համար անհրաժեշտ է արեգական լոյսի ազդեցութիւնը։ Ակատելի է և այն՝ որ գլործֆիլը չէ զարգանուում։ Եթէ բայսերի մեջ չէ ստանուում։

Բայսին սնունդ տաւաղ բույր խորշերի մեջ դանումէ սուլոյ (կրախալ)։ Օսլան սպիտակ համբկներից է բաղկացած, որոյ ձեւը զանազան է, լինուում զանազան բայսերի մեջ։ Եթէ մանրացուցով նայենք այդ համբկների վերայ՝ կտեսն ենք որ գոքաշերտից են բաղկացած։ Որոց կենարունը մի ափի կողմին է դառնուում։ Օսլան բաղկացած է, թթուածնի ջրածնի և ածխածնի քիմիական միութիւնից սաւար ջրի մեջ օսլան շի հալուում։ Իսկ առք ջրի մեջ ու ոչումէ և շրէց է առաջնուում։ Խոզից կապոյտ գոյն է ստանուում և գորա համար խորշերի մեջ օսլայի ներկայութիւնը զիւրին է իմանալ։ Օսլան կարծիս թէ սննդաբար հիմքի պաշարի տեղ է ծառայուում։ որը որոշ հանգամանքների մեջ հալուումէ և գործ է ածւում նոր խորշեր կադմակերպելու համար։ Օսլան աւելի շուա է գտնուում բայսերի այն մասերի մեջ, որոնք ձմեռ ժամանակ կերակրի պահարանի զեր են խաղուում հետեւալ գարնան ժամանակ սնունդ տալու համար (օրինակ սերմերի, սոխերի պալարների մեջ)։

Խորշերի մեջ դառնուում են նմոնապէս ճարպ և իւղ որոնք բաղկացած են մի և նոյն տարրերից ինչպէս և օսլան։ և իրքի կերակրի պաշար ծառայուում են մի և նոյն նպատակին։ Եղբ գտնուումէ առաւելապէս սերմերի և պառւղների մեջ (վուշ հնդիկ ընկոյզ, կազին նուշ ձիթապտուղ, և այլն)։

Հաքարը մի և նոյն տարրերից բաղկացած լինելով վերոյիշեալ նիւթերից նորանով է զանազանւում։ որ աւելի է հալուում ջրի մեջ։ և այդ պատճառաւ բայսերի խորշերի մեջ հալուած պատթեամբ է գտնուում։ Քարարը օսլայից է առաջնուում, իսկ օսլան կազմուում է տերեւների մեջ։

Բացի սպոնսից խորշերի մեջ լինուում են սպիտակ օւցի նիւթեր (ճելկօվա նեշտաք), որոնք բաղկացած են ածխուածնից։ թթուածնի մեջ ու ածընից և բուրակածնից։ Պրոտոոպլասման մի քանի սպիտակաւցի նիւթերի խառնուրդ է։ Առանձանիւթը (ճելկօվա) ևս սպիտակաւցի նիւթ է, սոսնձանիւթը գտնուումէ ցորենի մեջ։ և մուս համեմերի արտաքին խորշերի մեջ։ Այն մածուցիկ նիւթը որ մնումէ բերանի մեջ ցորենի համբկներ ծամելուց յետոյ՝ սոսնձանիւթն է։ Մեծ քանակութեամբ սոսնձանիւթն ստանալու համար պէտք է ցորենի ալիւրը լցնել քաթանի պարկի մեջ և քամել ջրի տակ։ օսլան ալիւրից հանելու համար, պարկի մեջ սոսնձանիւթն է մնում։

Հատ տեսակ բայսերի խորշերի մեջ գտնուում են առանձին տեսակ սպիտակաւցի նիւթեր։ որոնք բիւրելու (կրիստալ) գառնուլու ընդունու-

կոմիթիւն ունին։ Գոցանից շատերը բուժիչ զօրութիւն ունին։ օրինակ իւինին և մօք ֆինս միւսները թունաւոր են օրինակ ստրիխնին և նիկօտին։ երրորդները գոգուցուցիչ են օրինակ թէյին և կօֆէին։ Այդ տեսակ նիւթերը ակուլոյի դներ են անում։

Խորշերի մէջ գտնուում են նմանապէս հայքային (миморальны) յատկութեամբ նիւթերը այդ տեսակ նիւթերին վերաբերում են, ծծումը (չերա), որը սպիտակուցի նիւթերի մէջն է լինում։ Երկաթի որը քլորօֆիլի կազմութեան համար անհրաժեշտ է, գայլախազ ազային հող (кремнеземъ), որը գտնուում է չհալուած գրաւթեամբ խորշային թաղանթների ներսում։ Խորշի մէջ լինում են նմանապէս ֆոռֆօրամբ-թուատի միւթիւնները կայիի և նատրիի աղեր և այլն։

Խորշերը մէծաւ մասամբ այնքան փոքր են որ մեր աշօք տուանց մանրացուցի տեսնել կարող չենք։ սովորական բոյսերի խորշերի տրամադիմը փոխուումէ զիւմի /, մինչեւ /...րդ։ Խորշերի միջին չափը հասնում է /, մինչեւ /...զիւմն այնպէս որ բուսական նիւթի մի խորանարդ զիւմի մէջ պարունակումէ 27 ից մնչ 12, միլիոն խորշեր։

Քոյսը աճուում է իւր ծաւարով, ոչ թէ միայն նորա համար՝ որ նորա խորշերը սնունդ են ստանում և մէծանում, այլ և այն պատճառաւ, որ բոյսի խորշերի թիւը մէծանումէ կամ ինչպէս ասում են, բայցը բազա գտնումէ։

Քոյսերի բազմանալն կատարւում է երկու եղանակով ազատ և բաժանմամբ։ Երկու եղանակների մէջ ես նոր խորշերը առաջանում են խորշանկուածի թաղանթ և ահա նոր խորշերը պատրաստ են։ Խորշերի կազմուելու այս կերպի մէջ, նոր խորշերի համար զործ է ածուում մայրական խորշի պրօտոպլասմայի մի մասը, այնպէս որ զետեհաս խորշերը պրօտոպլասմայի միւս մասի մէջ ընկլամած են երեսում։

Բայց անհամեմատ շատ ապրածուած է խորշերի բազմանալու միւս եղանակը այն է բաժանմամբ։ Ապրական խորչի բալոր պրօտոպլասման զործ է ածուում նոր խորշեր կազմուելու համար։ Բաժանմամբ խորշը բազմանում է չետեհալ ձեռով։ Խորչի պրօտոպլասման ամիերից փռսանում է և զիզակի հետ միասին բաժանուում է երկու մաս և ամեն մի կէսը ծածկուում է նոր թաղանթով։ Երբ նորակազմ խորշերը պատրաստ են, սրանց կազմուղ մայրական խորշը կամ պատառուում կամ նորանում է և կամ մի քանի ժամանակ զետեհաս խորշերի մէծանալու համեմատ ձգուում և վերջը անհետանում։

Բայց անհամեմատ շատ ապրածուած է խորշերի բազմանալու միւս եղանակը այն է բաժանմամբ։ Ապրական խորչի բալոր պրօտոպլասման զործ է ածուում նոր խորշեր կազմուելու համար։ Բաժանմամբ խորշը բազմանում է չետեհալ ձեռով։ Խորչի պրօտոպլասման ամիերից փռսանում է և զիզակի հետ միասին բաժանուում է երկու մաս և ամեն մի կէսը ծածկուում է նոր թաղանթով։ Երբ նորակազմ խորշերը պատրաստ են, սրանց կազմուղ մայրական խորշը կամ պատառուում կամ նորանում է և կամ մի քանի ժամանակ զետեհաս խորշերի մէծանալու համեմատ ձգուում և վերջը անհետանում։

Խորշերը բազմանալով անկուտծներ (տառ) են կազմում։ Առ կուսնիերի մէջ խորշերը սովորաբար մօտենում են և այնպէս խիստ են միմէանց մաս կազում։ որ նոցա թագանթները միայնակ են ձևացնում։ թէպէտ և նոքա միայնակ չեն, ոյլ կրկին են, այս բանին համազուելու համար բարական է որ անկուտծր մի քանի բոլոք եռած ջրի մէջ պահել և այնուհետեւ խորշերը բաժանել ասեղով։ Նիւթալի պառողների մէջ զորդացած խորշերը անջատուած են լինում։ Խոկ շղարգացած խորշերը պինդ միացած են լինում։ Բայց երբեմն խորշերը շատ խտաշար հաւաքուած չեն լինում, այնպէս որ նոցա մէջ տարածութիւն է նկատում։ կամ զանազան մեծութեամբ անցքեր են մնում։ Այդ անցքերին միջնա առաջ տուին վայրեր են անուանում (մежевательные пространства), որոնք երբեմն մի ամրող համակարգութիւն են կազմում։ միջնա առ շատ ին անցքերի (межевательные ходы)։

Եթէ նայենք մանրացուցով արմատից ցողունի կամ որ և իցէ պինդ անկուտծի բարակ կարուած կառուները կնկատենք որ խորշերը վեց անկիւնափ ձեւ ունին խորխոսի բժիճների նման, և մի և նոյն ժամանակ ոյս ձեր պահպանուում։ Խոչ ու զղութեամբ էլ որ կարենք բայսի մասերը թէ լոյնութեամբ, թէ երկայնութեամբ և թէ թեր։ սորս պատճառը շատ պարզ է։ Խորշի բնական ձեր գնդաձեւ է։ Խորշերը սովորաբար կը լուսը են լինում։ Եթէ նոցա հարեան խորշերը չեն ձնչում։ Այս մի քանի գնդակների հարացուածամբ են հարացնեիր ներսի գնդակները կազում են հարեան տառաներ կողմէ գնդակները միանենակ նման է կամ գնդակները վերացնելու 12 գնդակների ձնչուութիւնից երկուասանանիութ ձեւ են ստանում։ որեմն նոցա կարուածքըն որ և իցէ ու զղութեամբ պիտի վեց անկիւնափ ձեւ ներկայացնի։

ԱՅՐՄԸ ԵԿ ՆԱՐԱ Ա.ՀԱՅԱՐԴՆ

Գարեան ժամանակ մենք բազմաթիւ սերմերից աճող բոյսեր ենք աեսնում։ Նոքա հաղի վերայից անդադար բարձրանում, աճում են և բաւականաշափ մեծանում են, պառուղ և սերմեր են տալիս այն աեսակ սերմեր, սրոնցից իրանք աճել են, քննենք մի որ և իցէ բայսի կեանքը սկզբից, օրինակի համար վերցնենք հացին (клентъ), մի զյուղ նեղ կանուշ տերեւներ բարակ ցողունի վերայ կազմում են բոյլոր բայրը նորա նոր ծլած ժամանակի բարակ ցողունի վարի ծայրը շարունակում է փոքրիկ արմատի մէջ, խոկ վերի ծայրում զայգ տերեւների մէջ շուտով փոքրիկ պտուկ (погка) է երեսում, որը աճելով ցողունի երկրորդ ծունդն է առաջացնում մի զյուղ տերեւներով, պյու տերեւները հացիի սովորական տերեւների նման են, խոկ առաջի զյուղ տերեւները բայրովին նման չեն։

Ատրենք սուր գանակով հացիի սերմը։ Նորս մէջ մենք պատրաստ փոքրիկ բոյս ենք նկատում։ որը նորածիլ բոյսի ցողունի նման կարծ զլանակի վերայ, մի զյուղ փոքրիկ տերեւներ է ներեայացնում, և այս բոյլը թէ զլանակը և թէ տերեւները սերմի կեղենի տակ են ծածկուած։ Աւրեմն սերմի մէջ արդէն բոյս է գանառում միայն շատ փոքրիկ զյուղ թեամբ, և սերմի աճելուց ոչ թէ նոր բոյս է կազմում, ոյլ նորա մէջ գանուած փոքրիկ բոյսը զարգանում։ Սերմը բացւում է և աճում, զլանակը երկարում և ուղաձիգ պութիւն է ստանում, այնպէս որ

վերի ծայրը զորս է եղում՝ դեպի օդը և լոյսը և այսուղ տերեները ոչ զգում են, իսկ հողի մէջ ուղաւած վարի ծայրից արմատն է շաբանում:

Սերմի մէջ զանուած փոքրիկ բոյսը սազմ (зарօճանակ) է կոչում:

Սաղմի տերեները շարիւներ (սեմյանուն) են կոչում, զլանակի հողի մէջ ուղաւած ծայրը արմատն է փախում և առաւմ և արմատիկ (կորսոկ) . իսկ արմատիկի և շաբիլների մէջ զանուած զլանակի մասը ցողնուկ (տեబելեկ) է կոչում:

Տաղարգացած տերեներից բազկացած փոքրիկ պատուկը՝ փետուրիկ (ուրանուկ) է առաւմ և շատ բայսերի սերմի շաբիլների մէջ է զանուած: Հացիրի պատուկը՝ կամ ինչպէս անուանեցինք փետուրիկը երեսում շաքիւների բացուելուց անմիջապէս մի քանի օրից յետու նորու տերեները բնի վերայ շաբիլներից փոքր ինչ հոսու որութեամբ գեպի վեր են բարձրանում: Այժմ փոքրիկ բոյսի հողի վերայ զանուած մասը երկու զոյզ տերեներից է բազկացած, ոյսինքն շաբիլներից, որոնք նախկին ցողնուկի վերայ են զանուած և մի զոյզ սովորական տերեներից, որոնք ցողունի երկրորդ ծունքի վերայ են նաև առաջնորդ լինում: Ենայդ երկրորդ զոյզ տերեներն են սուածանում երրորդ ծունքի վերայ մի և նոյնը շաբանակի կրկնում մէ մինչեւ գետահաս բայսի մասնակութեամբ:

Արեմն հացիի սերմի մէջ զանուած սաղմի սկզբից բազկացած է ինում արմատակից, ցողնու կից և մի զոյզ տերեներից: Արեմն սուզմին հարկաւոր է միայն երկարել, տերեները զորս հանել գեպի բոյսը և արմատ մէղնել հողի մէջ: որ որինաւոր բայս դասնոյ և կերակուր հոյժմայմելու համար ընդունակութիւն ստանոյ: Այս արմատը յարմարուոր նիւթերից պիտի կազմուած լինի, թէ ջուրը և թէ միւս նիւթերը որոնց պիտի ծծէ հողից գետահաս բայսը այդ նպատակին յարմար շեն: Այդ նիւթերը պիտի տաաջուց մշակուին, փոխուին գործ ծարանուուր ական (օրգանական) նիւթերի:

Տաղմը այդ տեսակ զործ կատարելու կարողութիւն չունի, քանի որ նա կանոնաւոր կանաչ քլորօֆիլի հատիկներով տերեներից զարդէ է, որոնք միայն ածխամեթուատի լուծելու ընդունակութիւն ունին: տաղմի բոյսին անհրաժեշտ ածխամեթուատի լուծելու հայց պիտի ասել՝ որ սաղմը շատ թէ քիչ քանակութեամբ հարկաւոր կերակուրով մատակարարուած է և այդ կերակուրը գտանուումէ սերմի մէջ կամ ուղղակի սաղմի մէջ և կամ նորա շորս կաղմը: հացին այդ կերակուրը պատրաստած ունի շաբիլների մէջ: Կերակրի պաշարը շատ չէ, այդքան է որ կարողանում ցողնուկը երկարացնել, շաբիլները գեպի բոյսը հանել և կազմել տառչին արմատակը:

Բայց երբ այս լինումէ, փոքրիկ բոյսիկը այլ ևս ուրիշի օգնութեամբ կարօտութիւն չունի, նա ապրում է և շարունակումէ մէծանով այն նիւթերի հաջուվ, որոց ընդունումէ հողից և օդից և արեգական լուսի ազդեցած մշակումէ կանաչ տերեների մէջ:

Բայսերից մէծ մասը իւրեանց սերմերի մէջ համեմատարար աւելի պաշար են ունենում: աւելի լաւ օրինակ ներկայացնուում լըրու սերմը: Եթէ մէնք լորու կեղել կշալենք (ի հարկէ առաջուց լորին ջրի մէջ պիտի թրրջել) մէնք կնկատենք սաղմը և կտեսնենք որ բոլոր սերմը համարեան երկու շաբիլներից է բազկացած, շաբիլները բաւականի հաստ են, թէպէտ և ածելու միջացին նորա հողից զորս են զալիս և կանաչ զոյն են ստանուած, բայց ոչ մի ժամանակ իսկական տերեներ չեն զանուած: Աճող փոքրիկ բոյսիկի համար պաշարի տեղ լինելով, շաբիլները այնքան փոխուած են որ չեն կարողանում տերեների զործը կատարել: Այդ զործը կատարում են երկրորդական զոյզ տերեները, որոնք պատուկից են զարգանում և շաբիլների մէջ զանուած առատ կերակրից, արագ մէծանում են: Իսկ շաբիլները իւրեանց զործը կատարելուց յետոյ թասամաւում ու թափում են:

Արաեսի շաքիլները աւելի հաստ են, համարեաւ կիսագնդաձե են, նորա բոլորովին անբեների նման չեն, սերմի աճելու ժամանակ նորա մնում են հողի տակ և սաղմի միւս մասերին առատ կերակուր են տալիս:

Պատահում է շատ անգամ որ աճող բոյսի կերակուրը սաղմի մէջ չէ պահուում, ինչպէս զերոյիշեալ բոյսերինը այլ շրջապատում է սաղմի բոլորովիքը:

Սաղմի շարս կողմը զետեղուած կերակրի պաշարը սպիտակուց (Ենթակա լօք) է տառում, Սերմի սպիտակուցը կենդանիներին և մարդուն կերակրի տեղ կարող է ծառայել, այդ սպիտակուցը (ալիւրոյին մասը) ցորենի, բրնձի, եղիպատցորենի սերմերի զիսաւոր մասն է կազմում:

Վերը նկարագրուած սերմերի սաղմը, թէպէտ և իւրեանց ձեւերով զանազանում են բայց մի և նոյն մասերից են լինում բաղկացած, այն է արմատի կից, ցողնուուկից և վերը մի զոյգ շաքիլներից, Այդ տեսակ սաղմին երկշաքիլ (ճայումյանունին) են անուանում: Ըստ զէպիերում շաքիլները այնքան փոքր են, որ սաղմի ծայրը միաբրիկ ակասի ձեւով են նկատուում (օրինակ եղածաղիկն լուսիկ) բայց աճելու ժամանակ նորու զարգանում գառնուում են մի զոյգ իսկական շաքիլներ: Սոխի, եղիպատցորենի, ցորենի սերմերի աճելու ժամանակ սկզբից միայն մի սերև է երկուում, այդ բոյսերի սաղմը մատակարարուում է միայն մի շաքիլով և զարա համար առուում են մի տշաքիլ (օճայմյանունին) բոյսեր: Ասիսի շուշանի սաղմը բաղկացած է, կարծես թէ, հասարակ երկոր կամ զլատաձե մարմնիկից, որի վերաց ոչ մի մասեր չեն նկատուում, Այս բարի ծայրի ծայրը արմատի կն է ներկայացնուում, որից արմատներ են առաջանուում, իսկ միւս մասը շաքիլն է ներկայացնուում, որը շրջապատում է աճելու ժամանակ առաջի տեղում երեացաղ պառուին:

Այս շաքիլաւոր բոլոր սերմերի աճելու ժամանակ շաքիլները մնում են սերմերի մէջ, իսկ հողից գուրս է ելուում պտուկը, որից բոյսիկի առաջին տերեներն են զարդարուում: Տերենները առաջանուում են հետեւարար կամ մինը միւսի վերաց և կամ մինը միւսի մէջ և մի և նոյն ժամանակ առաջին տերենը իւր ձեռով աւելի թեփի նման է կամ անկատար տերենի նման:

Այս տարբերութիւնները, թէ շաքիլների և թէ աճելու եղանակի մէջ շատ կարեւոր են, որովհետեւ այդ տարբերութեան վերայ հիմնուելով բուլոր ծաղկատու բոյսերն երկու մեծ խմբի են բաժանուում, միաշաքիլ բոյսեր (սաղմը մի շաքիլով): և երկշաքիլ բոյսեր (սաղմը երկու շաքիլով):

Այդ խմբերը, ինչպէս յետոյ կտեսնենք, ուրիշ յատկութիւններ և ունին:

(ԵՐԵՄԱՆ-ՔԵԼ)

Գ. Տ. Գ.

Ա. Բ. Է. Պ. Ա. Կ.

Արարատի սոյն ամսատեսրի ԵԿ երեսի վերջին տողի մէջ փոխանակ « յարգանքի » սխալմամբ տպուած է « հանգամանքի »: